## ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ

# ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՆՈՐԱԳՈՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՇՈՒՐՋ[1]

*«Եփրատի ջուրերը այնքան դիակներ կը կրեն իրենց վրայ, որ տեղ-տեղ կուտակուած, կը ձևացնեն անցարգելներ որոնք կը ստիպեն գետը՝ փոխել իր ընթացքը»[2]:*

***Անրի Բարբի, ֆրանսիացի լրագրող, Հայոց ցեղասպանութեան ականատես***

### *Ա. Մատենքների Պաշտամունքի Որոշ Կարգաւորումներ՝ Սրբադասման Գործընթացի Համատեքստում*

*Սրբադասման գործընթացի հիմքում պատմականօրէն Վաղ եկեղեցում սկիզբ առած սրբերի պաշտամունքն է: Ամենայն հաւանականութեամբ հէնց ամենասկզբից Եկեղեցում առանձնացուել են սրբերի որոշակի դասեր կամ խմբեր, եւ ննջեցեալների՝ դրանցից որեւէ մէկին պատկանելը վկայել է նրանց սրբութեան մասին[3]: Ըստ հանրայայտ ուղղափառ ուսումնասիրող, Ընդհանրական եկեղեցու պատմութեան մասնագէտ Եւգէնիյ Գոլուբինսկու (1834-1912) դիտարկման՝ այդ դասերից առաջինին պատկանում էին հին-կտակարանեան նահապետները, մարգարէները եւ առաքեալները (ըստ հեղինակի՝ Աստուածամայրը եւ Յովհաննէս Մկրտիչը վեր էին այս դասերից): Երկրորդ դասը ձեւաւորուել է աստիճանաբար՝ ներառելով այն ննջեցեալներին, որոնց գործած սխրանքը, ըստ Եկեղեցու հաւատամքի, արդէն իսկ ապահովել էր նրանց համար սրբութեան պսակ (մարտիրոսներ), իսկ երրորդ դասին պատկանում էին այն սրբերը, որոնց սրբութիւնը Եկեղեցին ճանաչում էր ոչ թէ այդ դասին պատկանելու պատճառով, այլ անձնապէս համարելով նրանցից իւրաքանչիւրին արժանի նման ճանաչման. դրանք ճգնակեացներն (ասկետ) էին[4]:*

*Արդէն II դարից սկսած՝ հանդիպում ենք «մարտիրոս» բառին՝ քրիստոնէական հաւատի համար նահատակուած անձի իմաստով. առաքելական հայրերից Ս. Պոլիկարպոս Զմիւռնացու մարտիրոսութեան մասին գրուածքի՝ Զմիւռնիայի համայնքից անյայտ հեղինակը նշեալ բառը կիրառում է հէնց այդ համատեքստում[5]: Մարտիրոսներին իբրեւ սրբեր ճանաչելու եւ պատուելու, ինչպէս նաեւ նրանց պաշտամունքի հետ կապուած տարբեր հարցեր կանոնակարգելու աւելի մեծ հնարաւորութիւն ընձեռուեց*

---

[1] Սոյն ուսումնասիրութիւնը կատարուել է ՀՀ ԿԳՄՍՆ Գիտութեան կոմիտէի տրամադրած 19YR-6F022 ծածկագրով դրամաշնորհի շրջանակում:

[2] **Հ. Պառպի,** Սարսափի երկրին մէջ. նահատակ Հայաստան, Բ. հրատարակութիւն, «Այգ» մատենաշար – 11, թարգմ. Միքայէլ Շամտանճեան, Հալէպ, 2010, էջ 31:

[3] Տե՛ս **Е. Е. Голубинский,** История канонизации святых в Русской Церкви, Москва, 1903 (переиздание 1998 г.), էջ 13:

[4] Տե՛ս նոյն տեղում:

[5] **Գ. Յարութիւնեան**, Սրբադասման նախաշաւիղներով. մարտիրոսների պաշտամունքի որոշ կարգաւորումների առանձնայատկութիւնները Վաղ եկեղեցում, «Բանբեր Մատենադարանի», թիւ 30, Երեւան, 2020, էջ 259:

*քրիստոնէութեան հալածանքների աւարտից եւ քրիստոնէութեան՝ իբրեւ ազատ դաւանուող կրօն հռչակումից յետոյ։ IV դարում Կոստանդիանոս Ա. Մեծ կայսրը (մօտ 280[6]-337 թթ.) եկեղեցիներ կառուցեց Պետրոս եւ Պօղոս[7] առաքեալների թաղման վայրերում՝ Հռոմում, իսկ Կոստանդիոս Բ. կայսրն (317-361 թթ.) աւարտեց 12 առաքեալների «Մաւզոլէում»-ի կառուցումը Կոստանդնուպոլսում եւ այնտեղ տեղափոխեց առաքեալներից երեքի մասունքները։ Այս գործողութիւնները, որոնք կարող են դիտուել իբրեւ առաքեալների պաշտօնական սրբադասում, յստակօրէն հետեւում են հրապարակայնօրէն տարածուած պաշտամունքին եւ սերտ կապ ունեն գերեզմաններում կամ ուխտավայրերում մասունքների մեծարանքի հետ[8], ինչն էլ հիմնականում պայմանաւորուած էր այդ մասունքների հրաշագործ բնոյթի մասին համոզմունքով։*

*Ժամանակի ընթացքում մարտիրոսների եւ նրանց մասունքների պաշտամունքի տարածման հետ զանազան վայրերում առաջանում էին նաեւ որոշակի խնդիրներ կամ տարբերութիւններ, ուստի Եկեղեցին, արդէն IV դարից սկսած, քայլեր էր ձեռնարկում՝ կարգաւորելու այդ երեւոյթները[9]։*

*Մարտիրոսների պաշտամունքի նոր զարթօնք առաջացրեց Երուսաղէմում 415 թ. քրիստոնեայ առաջին մարտիրոսի՝ Ս. Ստեփանոս Նախավկայի մասունքների յայտնաբերումը, որը համեմատելի էր դրանից մօտ մէկ դար առաջ Տիրոջ խաչափայտի յայտնաբերման յարուցած ոգեւորութեան հետ[10]։ Հիւսիսային Աֆրիկայում մարտիրոսների պաշտամունքի քննութեանն են անդրադարձել Կարթագենի մի շարք ժողովներ, իսկ 419 թ. ժողովի կանոններից մէկով տեղի եպիսկոպոսներին յանձնարարւում էր քանդել ամենուր՝ դաշտերում եւ այգիներում կանգնեցուած խորանները՝ նուիրուած իբր մարտիրոսներին, եթէ պարզուէր, որ դրանց տակ մարտիրոսների մարմիններ կամ մասունքներ առկայ չեն[11]։ Կանոնի շարունակութեան մէջ, ենթադրելով ժողովրդական հնարաւոր յուզումները, հրահանգւում էր ծայրայեղ դէպքում խրատել ժողովրդին, որ նման վայրերում չհաւաքուեն ու սնոտիապաշտութեան մէջ չընկնեն, իսկ մարտիրոսների յիշատակութիւնը պիտի իրականացնէին միայն այն դէպքում, երբ ստուգապէս յայտնի լինէր նրանց մարմնի կամ մասունքների առկայութեան մասին[12]։*

*Ժամանակի ընթացքում ծիսական օրացոյցներում համակարգւում են մարտիրոս-*

---

[6] Տարբեր աղբիւրների վրայ հիմնուելով՝ կայսեր ծնունդը տարբեր ուսումնասիրողներ թուագրում են 272-284 թուականներով։

[7] Ըստ Լ. Քանինգեմի՝ Պօղոս առաքեալի մասունքների վայրում կառուցուած բազիլիկի՝ Կոստանդիանոս Մեծին վերագրելու աւանդութիւնը պակաս վստահելի է, քան Պետրոս առաքեալին նուիրուած բազիլիկի դէպքում է. տե՛ս **L. S. Cunningham,** A Brief History of Saints, Blackwell Publishing, **2005**, էջ **19**։

[8] Տե՛ս **A. Psarev,** “Canonization”, The Encyclopedia of Eastern Orthodox Christianity, ed. by J. A. MsGuckin, vol. I (A-M), Wiley-Blackwell, **2011**, էջ **106**։

[9] Մարտիրոսների պաշտամունքին առնչուող վաղ-քրիստոնէական կանոնաիրաւական կարգաւորումներից որոշների մասին տե՛ս **Գ. Յարութիւնեան**, Սրբադասման նախաշաւիղներով. մարտիրոսների պաշտամունքի որոշ կարգաւորումների առանձնայատկութիւնները Վաղ եկեղեցում, էջ 261-265։ Հայոց եկեղեցու համապատասխան կարգաւորումների մասին տե՛ս **Հ. Յակոբեան,** «Սրբադասման կարգը հայոց մէջ», «Էջմիածին» ամսագիր, Ե., 2011, էջ 55-59։

[10] Տե՛ս **В. А. Федосик, В. В. Яновская, О. А. Яновский,** Мученичество в раннем христианстве: очерк исторического восприятия, Минск, **2011**, էջ **77**։

[11] Քանի որ Կարթագենի այս ժողովի կանոնները ներառում են նաեւ նախորդ ժողովների որոշումները, կանոնների համարակալումը տարբեր ժողովածուներում տարբեր է. Ռուս ուղղափառ եկեղեցու Կանոններում այն 94-րդ համարի ներքոյ է. տե՛ս **Епископ Григорий (Граббе),** «Каноны Православной Церкви», https://azbyka.ru/otechnik/pravila/kanony-pravoslavnoj-tserkvi-grabbe/ (դիտուել է **30.04.2022** թ.)։

[12] Տե՛ս նոյն տեղում։

*ների յիշատակի օրերը, ինչն արտացոլուել է նաեւ կանոնական բնագրերում։ Նման կարգաւորում է հանդիպում այսպէս կոչուած Ասորական Առաքելական կանոններում կամ «Վարդապետութիւն առաքելոց»-ում (ըստ Ռ. Վարդանեանի թուագրման՝ ասորերէն բնագիրն ամենայն հաւանականութեամբ 377 թ. է ստեղծուել[13], իսկ հայերէն թարգմանուել է 547 թ.[14]), որի ԻԷ. (27) կանոնն (վերնագրուած է «Վասն զյիշատակ վկայից կատարելոյ») արդէն պատուիրում է այդ մարտիրոսների յիշատակի կատարման ձեւը. «Կարգեցին առաքեալքն եւ եդին հաստատութեամբ, եթէ ոք ելանիցէ յաշխարհէ ճշմարիտ վախճանաւ եւ կամ խողխողեալ յանաւրինաց* ***վկայ հաւատարիմ վասըն անուան Փրկչին՝ խոստովանելով զՔրիստոս ի նեղութիւնսն,*** *որ* ***վասն անուան նորա լինի, արասցեն զյիշատակս նոցա յաւուր մահուան նոցա, և զնշխարս ոսկերաց նոցա ի պատիւ առեալ փառաւորեսցեն զՔրիստոս…*** *[ընդգծումը մերն է – Գ. Յ.]»[15]։ Այստեղ, ի թիւս սրբադասման բաղադրիչներից մի քանիսի, առկայ է նաեւ վկաների մասունքները պատուելու հրահանգը։ Կանոնախմբում գործածուել են է՛ւ «մարտիրոս», է՛ւ «վկայ» բառերը զուգահեռաբար՝ որպէս հոմանիշներ։ Այս կանոնախմբի վերջին՝ ԼԴ. (34) կանոնի եզրափակիչ մասում, երբ թուարկւում են այն վայրերը, որտեղ Քրիստոսի առաքեալները քարոզել ու նահատակուել են, նշւում է նաեւ նրանց յիշատակը կատարելու եւ նահատակութեան վայրերում վկայարաններ կառուցելու, նրանց յիշատակը մեծ պատուով ու ցնծութեամբ կատարելու մասին[16], ինչն էլ արդէն վկայում է նշեալ բնագրի ստեղծման ժամանակ առաքեալների եւ գուցէ նաեւ մարտիրոսների (առաքեալները համարւում էին առաջին մարտիրոսները) պաշտամունքի արմատաւորուած եւ պաշտօնականացած վիճակի մասին։*

*Ըստ ամերիկացի կանոնագէտ Քեթի Քարիդիի՝ Ս. Պոլիկարպոս Զմիւռնացու մարտիրոսութեան նկարագրութիւնն արդէն ցոյց է տալիս մարտիրոսների մասունքների հանդէպ վերապրած քրիստոնեաների կողմից ցուցաբերուած մեծագոյն յարգանքը Վաղ Եկեղեցում, սակայն հէնց շարունակուող հալածանքներն ակնյայտօրէն կանխում էին քրիստոնէական հաւատի համար սպանուածների մարմինների հանդէպ հրապարակային մեծարանքի որեւէ գործողութեան հնարաւորութիւն[17]։ Միայն IV դարում քրիստոնէութեան պաշտօնական օրինականցմամբ եւ հալածանքների աւարտից յետոյ է հնարաւորութիւն ստեղծւում հրապարակայնօրէն յայտարարելու այդ մեծարանքի մասին եւ առհասարակ՝ այս շրջանից է սկիզբ առնում մարտիրոսների պաշտամունքի տարածումը տուեալ քրիստոնէական համայնքից անդին[18]։ Օրինակ՝ Ս. Գրիգոր Նիւսացին (մօտ 335 - մօտ 395 թթ.) մեծագոյն յարգանքով է խօսում իր քրոջ՝ Ս. Մակրինայի մասունքների մասին, որը մահացել էր Կոստանդիանոս Ա. կայսեր կողմից քրիստոնէութիւնը թոյլատրելի կրօն յայտարարելուց ընդամէնը մի քանի տասնամեակ անց[19]։ Աստիճանաբար սա պիտի տաներ անուանապէս հէնց տուեալ մարտիրոսին նուիր-*

---

[13] **Ռ. Վարդանեան**, Հայոց տոմարական եղանակը. թարգմանական բնագրերի ժամանակը, Երեւան, 1993, էջ 24-30:

[14] Տե՛ս նոյն տեղում, էջ 28-29. նաեւ **Ռ. Հ. Վարդանեան**, Հայոց տօնացոյցը (4-18-րդ դարեր), Երեւան, 1999, էջ 48, 62:

[15] Կանոնագիրք Հայոց, հտ. Ա., աշխատ. **Վ. Յակոբեանի**, Երեւան, 1964 (այսուհետ՝ ԿՀ, հտ. Ա), էջ 44-45:

[16] Տե՛ս նոյն տեղում էջ 58-66:

[17] Տե՛ս **C. Caridi,** Making Martyrs East and West: Canonization in the Catholic and Russian Orthodox Churches. Northern Illinois University Press, **2016**, էջ 32:

[18] Տե՛ս **Е. В. Ткачев,** «Канонизация», Православная энциклопедия, https://www.pravenc.ru/text/**1470233**.html#part_6 (դիտուել է 28.04.2022 թթ.):

[19] Տե՛ս **C. Caridi,** Making Martyrs East and West, էջ 32:

*ւած խորանի, մատուռի կամ անգամ եկեղեցու կառուցմանը, որն էլ վերջ ի վերջոյ պիտի կարեւոր տարր դառնար սրբադասման գործընթացի զարգացման ընթացքում[20]։ Մասունքների տեղափոխման արեւելեան սովորութիւնը տարածւում է Հռոմէական կայսրութեան արեւմուտքում. արեւելեան ծագում ունեցող Հռոմի պապերը մտցնում են Արեւելքի բազմաթիւ մարտիրոսների պաշտամունքը Հռոմի իրաւազօրութեան տակ գտնուող եկեղեցիներում[21]։ Ժողովուրդների մեծ գաղթը՝ պայմանաւորուած բարբարոսների ասպատակութիւններով, եւս նպաստեց, որ մարտիրոսների մասունքների տեղափոխումը եւ հետեւաբար՝ նրանց պաշտամունքը հասնի անգամ կայսրութեան ամենահեռաւոր մասեր. եւ այս ամէնը տեղի էր ունենում առանց եկեղեցական բարձրագոյն իշխանութիւնների ուղիղ միջամտութեան, այլ ինքնաբուխ[22]։*

*Կայ կարծիք, որ մարտիրոսների սրբադասման ծիսական արարողութեան պաշտօնական մասը պէտք է լիներ տուեալ մարտիրոսի մասունքների՝ հանդիսաւոր կերպով նրա համար նախատեսուած եկեղեցի կամ մատուռ տեղափոխելը։ Բնականաբար, սա քրիստոնեաների հալածանքների աւարտից մի քանի դար յետոյի նորամուծութիւն է, քանի որ սկզբնապէս իշխանութիւնների կողմից սպանուած քրիստոնեաների մարմինները հիմնականում վերցւում էին նրանց քրիստոնեայ ընկերների կողմից՝ ծածուկ թաղելու համար[23]։ Յետագայում արդէն՝ XI դարում, մասունքների տեղափոխումը՝ (լատ. համարժ.՝* “translatio”), *աւելի լայն իմաստ է ստանում, որը ներառում էր ծիսա-արարողակարգային գործողութիւնների մի ամբողջ շարք. մասունքների յայտնաբերումը (լատ. համարժ.՝* inventio, relevatio*), բարձրացումը (լատ. համարժ.՝* elevatio*), բուն տեղափոխումը (լատ. համարժ.՝* translatio*), ընդունումը (լատ. համարժ.՝* receptio*) եւ վերջապէս դրանց զետեղումը տաճարում[24]։ «Մասունքների տեղափոխում» արտայայտութիւնը սրբերի դէպքում յաճախ օգտագործւում է երկու տարբեր իմաստով. առաջին եւ աւելի տարածուածը՝ երբ որեւէ սրբի ոսկորի մի կտոր վերցւում է ամփոփման վայրից եւ տրւում անհատի կամ եկեղեցու՝ թողնելով մասունքների մնացած մասը սկզբնական տեղում։ Թէեւ սա ցոյց է տալիս, որ մահացածը մեծապէս պատւում է, բայց ինքնին չի հաստատում նրա սրբադասումը[25]։ Երկրորդ իմաստը պակաս կիրառուող է. այս դէպքում խօսքը մահացած քրիստոնեայի մասունքների՝ թաղման մի վայրից մէկ այլ՝ աւելի պատկառազդու վայր տեղափոխման մասին է՝ այդպիսով նրա մեծարման յստակ նպատակադրմամբ։ Հէնց այս իմաստով է, որ մարտիրոսի կամ սրբի մարմնի տեղափոխումը (լատ. համարժ.՝* “elevatio corporis”*) կապւում է նրա սրբութեան պաշտօնական ճանաչման հետ[26]։ Այս աւանդոյթն ակնյայտօրէն աւելի ուշ է ի յայտ եկել եւ*

---

[20] Տե՛ս նոյն տեղում։ Ուսումնասիրողը նկատում է, որ սրբադասուած քրիստոնեաների գերեզմաններին շարունակաբար այցելելու աւանդոյթն առկայ է նաեւ այսօր՝ ե՛ւ կաթոլիկների, ե՛ւ օրթոտոքսների շրջանում, ուստի այն քիչ է տարբերւում յանուն Քրիստոսի իրենց կեանքը զոհած անձանց հանգստարաններ այցելելու վաղ-քրիստոնէական սովորոյթից։

[21] Տե՛ս **Е. В. Ткачев,** «Канонизация», Православная энциклопедия, https://www.pravenc.ru/text/1470233.html#part_6 (դիտուել է 28.04.2022 թթ.)։

[22] Տե՛ս նոյն տեղում։

[23] Տե՛ս **C. Caridi,** Making Martyrs East and West, էջ 31-32։

[24] Տե՛ս **С. А. Яцык,** «Формирование исключительного права понтификов на канонизацию (993-1234)», “Средние века”, 2016, Т. 77, № 1-2, էջ 96։

[25] Տե՛ս **C. Caridi,** Making Martyrs East and West, էջ 32։

[26] Տե՛ս նոյն տեղում։ Ք. Քարիդին նշում է, որ լատիներէն 3 եզրեր՝ *“inventio”, “elevatio”* եւ *“translatio”*, ի վերջոյ շփոթում են եւ երբեմն փոխարինում մէկը միւսով, մինչդեռ եթէ յստակեցուեն իմաստները, առաջինը նշանակում էր գերեզմանի յայտնաբերում, որի տեղը մինչ այդ անյայտ էր, երկրորդը մասունքների տեղափոխումն էր նախնական՝ հիմնականում ստորգետնեայ վայրից վերգետնեայ տեղ, իսկ երրորդը գերեզմանի

*չի կարող նոյնացուել վաղ շրջանի տօնացոյցներում յիշուած* “depositio”*-ի հետ, որը վերաբերում էր Պատարագի ընթացքում յիշատակուող մահացածների (եպիսկոպոսներ եւ այլք) թաղման օրուան, ինչը կարող էր լինել եւ առանց հանդիսութիւնների ու միշտ չէր կատարուում մահացածին նուիրուած եկեղեցում կամ մատուռում*[27]*։*

*Ժամանակի ընթացքում, քանի որ նման տեղափոխումները կատարուում էին եկեղեցական պաշտօնեաների (սովորաբար եպիսկոպոսի) կողմից, ինքնաբերաբար հիմք էր ստեղծուում առ այն, որ այդ տեղափոխուող մասունքներն իրական մարտիրոսի կամ սրբի են. այս դէպքում արդէն անկախ նրանից՝ այդ մասունքները տեղափոխուում էին տուեալ անձին որպէս սուրբ պատուելու հաւանութեան արդիւնքում, թէ ուղղակի աւելի անվտանգ վայրում ամփոփելու համար*[28]*։ Ի վերջոյ, եթէ եպիսկոպոսը հրամայում էր տեղափոխել որեւէ մէկի մասունքները, ով իր կեանքն էր զոհել յանուն Քրիստոսի, նշանակում էր, որ նա իրական մարտիրոս է կամ պէտք է պատուի որպէս այդպիսին*[29]*։ Ի հարկէ, արդէն յետագայ դարերում՝ քրիստոնէութեան տարածմամբ եւ պաշտօնականացմամբ պայմանաւորուած, նման տեղափոխումները չէին կարող պայմանաւորուած լինել միայն անվտանգութեան նկատառումներով։*

*Միւս կողմից, սակայն, սխալ կը լիներ եզրայանգելը, որ շքեղ դամբարանը ցուցիչ կարող էր լինել տուեալ անձի սրբութեան ճանաչման (օրինակ՝ Որոգինէսը, ով երբեք չի պատուել Եկեղեցում որպէս սուրբ, III դարում թաղուել էր շքեղ զարդարուած դամբարանում, Կեսարիայում)*[30]*։ Միաժամանակ, հալածանքների ժամանակ նահատակուած նշանաւոր մարտիրոսները, որոնք արագ կերպով էին թաղուել, կարող էին ամփոփուած լինել հասարակ, չյարդարուած գերեզմաններում, եւ եթէ նրանց մասունքների տեղափոխում չլինէր, կարող էին դեռ լինել նոյն կերպ, յարաբերականօրէն հասարակ թաղման վայրում։ Սակայն ինչքան էլ գայթակղիչ լինի, չի կարելի անուղղակիօրէն եզրակացնել տուեալ մահացածի [սրբադասման] մասին՝ հիմնուելով միայն նրա գերեզմանի մեծութեան վրայ*[31]*։ Իրականում պարզ է նաեւ, որ մարտիրոս ճանաչուած բազմաթիւ քրիստոնեաներ ընդհանրապէս գերեզման չեն ունեցել, քանի որ նրանց մարմինները ոչնչացուել են նահատակութեան ժամանակ՝ հաշուի առնելով հռոմէական իշխանութիւնների կողմից կիրառուող հալածանքների բազմազանութիւնը։*

*Նկատենք, որ մինչեւ V դարի կէսերը մարտիրոսների նշխարների մասին յիշատակութիւններ կան նաեւ Հայոց Կանոնագրքի՝ տեղական ծագում ունեցող մի քանի կանոններում։ Այսպէս, Ս. Գրիգոր Լուսաւորչին վերագրուած կանոնախմբի ԺԸ. (18) կանոնը (խորագիրը՝ «Վասն նշխարաց վկայից») անուղղակիօրէն վերաբերում է մարտիրոսների մասունքներին. «Չէ պարտ ուր նշխարք մարտիւրոսաց դնին, ի վերայ պատարագ մատուցանել»*[32]*։ Ն. Վրդ. Մելիք-Թանգեանը, մեկնաբանելով այս կանոնը, նշում*

---

տեղափոխումն էր մի վայրից մէկ այլ վայր: Առաջինը, ի հարկէ, չէր վերաբերում բոլոր մարտիրոսներին, իսկ միւս երկուսը հիմնականում յաջորդում էին իրար, եւ մասամբ համընկնելով՝ յանգեցնում էին անճշգրտութեան, ուստի եւ այս եզրերը սխալաբար, թէեւ հասկանալիօրէն, դարձան մեծապէս որպէս հոմանիշ կիրառուող. տե՛ս նոյն տեղում, էջ 168, ծնթ. 65:

[27] Տե՛ս նոյն տեղում, էջ 32: Նման յիշատակութիւն ունի Եւսեբիոս Կեսարացին, երբ գրում է իր ուսուցչի եւ նրա ընկերների նահատակութեան ու թաղման մասին 309 թ.՝ ըստ հաստատուած սովորոյթի. այսինքն, այս մարտիրոսները հաւանաբար թաղուել են, ինչպէս եւ միւսները, առանց շքեղ արարողութիւնների. տե՛ս նոյն տեղում:

[28] Տե՛ս նոյն տեղում, էջ 34:

[29] Տե՛ս նոյն տեղում:

[30] Տե՛ս նոյն տեղում, էջ 35:

[31] Տե՛ս նոյն տեղում:

[32] ԿՀ, հտ. Ա, էջ 247:

*է. «Շատ ձեռագրերում հակառակն է գրած. շատ քչերում եւ համաբարբառներում է դրական գրած։ Նշանակում է, թէ վէմ քարի փոխարէն չի կարելի նշխարներ դնել եւ պատարագել (տե՛ս Ա առ. 27,5 Լաւ. 51, Շահ. 17)»[33]։ Կարելի է ենթադրել, որ կանոնում խօսքը ոչ թէ եկեղեցում զետեղուող նշխարների մասին է՝ ինչպէս Մելիք-Թանգեանն է կարծում (որոնք դրուել են վէմ քարի փոխարէն), այլ հաւանաբար մարտիրոսների՝ եկեղեցուց դուրս՝ կա՛մ գերեզմաններում, կա՛մ այլ հանգստարաններում զետեղուած նշխարների մասին։ Այս կանոնը թերեւս կարելի է դիտարկել Ս. Սահակ Ա. Պարթեւ հայրապետի կանոնախմբի Լէ. (37) կանոնի եզրափակիչ մասի հետ. «Եւ քանզի բազումք այսպէս կան վկայարանք ուրեք ուրեք յանուն, ճանաչեմք եթէ համանուն նոցա են շինեալք, այլ ոչ եթէ ինքեանք իսկ յորոյ անուն շինեցան. եւ մի պատիւ է ամենեցուն, զի մի խորհուրդ կատարի, քանզի սեղանն ամենայն ուրեք տերունական ասի եւ պատարագն. բայց միայն տաւնիւքն զանազանին, զի իւրաքանչիւր տեղւոջ սովորութիւն է կատարել կարգ տաւնիցն»[34]։ Ամէն դէպքում, քանի որ կանոնախմբում այս թեմային ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն վերաբերող որեւէ այլ հրահանգ չկայ, յստակ արգելքի ցուցման պատճառը կարող ենք միայն կռահել։ Աւելի մանրամասն հրահանգ է տրուել Շահապիվանի 444 թ. ժողովի Ժէ. (17) կանոնում (խորագիրը՝ «Վասն նշխարաց վկայից»), որը ներկայացնում ենք ամբողջութեամբ. «Եթէ ոք նշխարս մարտիւրոսի կամի դնել, առանց եպիսկոպոսի աշխարհին՝ մի՛ դիցէ։ Զյիշատակս մարտիւրոսաց եւ զժողովս՝ առանց եպիսկոպոսին հրամանի մի՛ ոք իշխեսցէ առնել։ Եւ եթէ ոք ի սուրբ տեղեացն մարտիւրոսս բերցէ, առ եպիսկոպոսն բերցէ վկայութեամբք եւ թղթովք եպիսկոպոսացն՝ ուստի եբերն. եւ իւրեանց եպիսկոպոսին հրամանաւ դիցէ՝ ուր արժան է դնել։ Եթէ ոք սեղան կամիցի կանգնել տերունական խորհրդին, առանց եպիսկոպոսին մի՛ ոք իշխեսցէ կանգնել։ Բայց նշխարացն յանուն, զոր բերին, մեծապէս տաւնախմբեսցեն յամենայն տարւոջ յաւր բերելոյն. եւ պատուոյ եւ սրբութեան զգոյշ, զի մի՛ ի ցասումն աշխարհի հասցէ փոխանակ բարեխաւսութեան»[35]։ Կանոնից կարելի է եզրակացնել, որ V դարի կէսին Հայոց մէջ կարգաւորուել է մասունքների տեղափոխութեան (մասնաւորապէս «սուրբ տեղերից»[36] բերելու) գործընթացը՝ նախատեսելով համապատասխան գրաւոր վկայութեան առկայութիւն՝ այն եպիսկոպոսների, որոնց կանոնական տարածքից որ բերւում էին նշխարները։ Միաժամանակ տեսնում ենք, որ Հայաստանում եւս եպիսկոպոսն է եղել այն մարմինը/ինստիտուտը, որը կարգաւորել է այս գործընթացը՝ որոշելով, թէ որտեղ պէտք է զետեղուեն այդ նշխարները։ Կարեւոր է նաեւ մարտիրոսների ամենամեայ յիշատակի օրուայ մասին տեղեկութիւնը. այս դէպքում յիշատակը կատարւում էր «յամենայն տարւոջ յաւր բերելոյն», այսինքն՝ մասունքների բերելու օրը։ Այս պրակտիկան եւս տարածուած էր եւ այսօր էլ առկայ է տարբեր եկեղեցիներում։*

*Եթէ սկզբնապէս այս կամ այն նահատակուած քրիստոնեայի՝ իրական մարտիրոս լինել-չլինելը ինտուիտիվ ու տրամաբանօրէն որոշւում էր տեղի քրիստոնեայ ողջ համայնքի կողմից[37], ապա յետագայում հարկ էր լինում տարբերակելու մարտիրոսու-*

---

[33] **Ն. Վրդ. Մելիք-Թանգեան,** Հայոց եկեղեցական իրաւունքը, վերահրատ., էջմիածին, 2011, էջ 411։

[34] ԿՀ, հտ. Ա, էջ 393։

[35] Նոյն տեղում, էջ 459-500։

[36] Խօսքն այստեղ ըստ ամենայնի Երուսաղէմի եւ Պաղեստինի մասին է, ինչը զարմանալի չէ՝ հաշուի առնելով ժողովից աւելի քան մէկ դար առաջ առկայ կապերը Հայոց եկեղեցու եւ Երուսաղէմի աթոռի հայրապետների միջեւ։

[37] Ինչպէս, օրինակ, Ս. Պոլիկարպոս Զմիւռնիացու դէպքում էր։

թեան իրական եւ ոչ իրական լինելը, ինչն էլ Եկեղեցուն մղեց տեղերում աստիճանաբար հաստատելու, որ տուեալ անձին որպէս մարտիրոս ճանաչելը կարող էր կատարուել միայն հոգեւոր իշխանութիւն ունեցող անձի կողմից[38]։

Հայոց Եկեղեցում եւս եպիսկոպոսին էին վերապահուած բազմաթիւ գործառոյթներ. եկեղեցական իրաւունքում նման կարգաւորումներ առկայ են մինչեւ V դարակէսը թուագրուող ինչպէս թարգմանուած, այնպէս էլ ինքնուրոյն՝ հայկական ծագման բազմաթիւ կանոններում։ Վերը դիտարկեցինք սրբերի մասունքներին վերաբերող կանոնները, որտեղ նշուած էր եպիսկոպոսների դերի մասին այդպիսի կարգաւորումներում, յատկապէս՝ Շահապիվանի ժողովի կանոններում։

Այսպիսով, նշուած օրինակները թոյլ են տալիս առանձնացնելու մի քանի կարեւոր առանձնայատկութիւն, որոնք վերաբերում են մարտիրոսների եւ առհասարակ՝ սրբերի պաշտամունքի կարգաւորմանը Վաղ Եկեղեցում՝ անուղղակիօրէն առնչուելով նրանց սրբադասմանը։ Նախ՝ Եկեղեցում ճշգրտուեց «մարտիրոս» եզրը. այն սահմանուել էր քրիստոնէութեան առաջին դարերի հալածանքների ժամանակ յանուն հաւատքի նահատակուած քրիստոնեաների համար։ Մարտիրոսների մեծարումն արտայայտւում էր ծիսականօրէն՝ նրանց անունները ներառւում էին տուեալ եկեղեցու դիպտիխներում (յետոյ՝ նաեւ տօնացոյցներում), որպէսզի յիշատակուեն տարեկան պարբերականութեամբ, Պատարագի ժամանակ, ինչպէս նաեւ հաւատացեալների կողմից նրանց գերեզմաններին այցելութեամբ։ Վերջինիս հետ կապուած՝ ժամանակի ընթացքում ամրագրւում է մարտիրոսի/սրբի մարմնի կամ մասունքների առկայութիւնը նրան նուիրուած պաշտամունքային վայրերում։ Իսկ քանի որ վերջինս եւ ընդհանուր առմամբ՝ տուեալ անձի մարտիրոսութեան հանգամանքների ստուգումը որոշակի քննութիւն էր ենթադրում, եկեղեցական իշխանութիւններին, մասնաւորապէս՝ եպիսկոպոսներին էր վերապահւում այդ գործընթացի ապահովումը, թէեւ քաղաքացիական իշխանութիւնների կողմից միջամտութիւններ եւս երբեմն տեղի էին ունենում։

Սրբադասման գործընթացի բաղադրիչ դարձած յաջորդ արարողութեան՝ մասունքների տեղափոխման հետ կապուած, ըստ ուսումնասիրողների՝ չափազանցութիւն կը լինի VIII-X դարերի տեղափոխման դէպքերի կէսից աւելին կապել ասպատակութիւնների վտանգի հետ։ VIII դարի վերջերին արդէն որեւէ սրբի մասունքների տեղափոխումը պէտք է դիտարկել որպէս պաշտօնական սրբադասում, քանի որ պատշաճ չէր համարւում սրբի մարմնի՝ հողի տակ մնալը, եւ այն տեղափոխւում էր մէկ այլ վայր՝ հաւատացեալների կողմից աւելի հեշտ մեծարուելու համար[39]։

Ընդհանուր առմամբ, VI-X դարերում սրբադասման գործընթացն իրականացւում էր հիմնականում տեղի եպիսկոպոսի կողմից, եւ տեղական սրբերի թիւը մեծանում էր՝ առանց եկեղեցական կենտրոնների կողմից ուղիղ վերահսկողութեան։ Եպիսկոպոսները (հիմնականում՝ թեմական առաջնորդները) դարձել էին եկեղեցական այն պաշտօնեաները, որոնց վերապահուած էր սրբերի պաշտամունքին պաշտօնական հաւանութիւն/թոյլտուութիւն տալու, մասունքների տեղափոխման իրաւասութիւնները։ Չնայած սրան՝ Արեւմուտքում արդէն իսկ նկատւում են այդ գործառոյթների՝ աշխարհիկ իշխանութեան կամ Հռոմի պապերի ձեռքում կենտրոնացնելու, իսկ Արեւելքում՝ Բիւզանդական կայսրերի՝ «սրբաստեղծման» հարցերին միջամտութիւնները։ Այդպիսի դէպքերում, սակայն, եկեղեցին ունեցել է վերջնական կարծիքի հնարաւորութիւն՝

[38] Տե՛ս **C. Caridi**, Making Martyrs East and West, էջ 36:

[39] Տե՛ս նոյն տեղում, էջ 35:

*ծայրայեղ դէպքում աշխարհիկ առաջնորդների մահից յետոյ փոխելով նրանց ընդունած համապատասխան որոշումները։*

### *Բ. Հայոց Յեղասպանութեան Մարտիրոսութեան Վայրերը. Նշխարների Տեղաբաշխման Վայրերի Փնտռտուքի Հրամայականը*

*Այսու, կարծում ենք՝ հայութեան ամենակարեւոր անելիքներից մէկը մնում է նորագոյն շրջանի նահատակների սրբազան մասունքների, ինչպէս եւ՝ զանգուածային նահատակութեան վայրերի յայտնաբերումը։ Սոյն ենթավերնագրում կը խօսենք օրինակներով՝ կենտրոնանալով նախ Հայոց ցեղասպանութեան սրբադասուած նահատակների զանգուածային թաղումների հնարաւոր վայրերի հարցի շուրջ։*

*Առանձնացնենք երկու հիմնական ուղղութիւնները, որտեղով քայլում էին տարագրութեան ճանապարհով անցնող հայերը։ Որեւէ մէկի համար նորութիւն չէ, որ Տէր-Զօրը, շրջակայքը, դէպի Տէր-Զօր տանող տարագրեալների ժամանակաւոր կացութեան բնակավայր-կէտերը հիմնականում այն վայրերն էին, որտեղ մէկ օրուայ ընթացքում մահանում, սպանւում էին հարիւրաւոր, եթէ ոչ հազարաւոր հայեր։ Սա առաջին ուղղութիւնն է։ Երկրորդ ուղղութիւնը գաղթականների հոսքն է դէպի Արեւելեան Հայաստան եւ ճանապարհի կոտորածներն ու մահացութիւնը։ Յուշագրութիւններում, ականատեսների վկայութիւններում, փաստաթղթերում առկայ յիշատակումները վկայում են, որ դրանք հայերի «Գողգոթայի ճամբաներն» էին։ Յոյս ունենք՝ պատմագիտութեան, քաղաքագիտութեան, հնագիտութեան համար այդ կէտերը կը դիտարկուեն ու կ'ուսումնասիրուեն իբրեւ հայերի ցեղասպանուելու կէտեր ու ապացոյցներ, կը յայտնաբերուեն համապատասխան նիւթական վկայութիւններ՝ օրինակ, մարդկային զանգուածային թաղումների, ոսկորների տեսքով, կը գտնուեն նիւթական այլ վկայութիւններ։ Սակայն նշուած գիտակարգերի կողքին Հայ Եկեղեցին, աստուածաբանական գիտութիւնը հարկ է, որ բարձրացնի իր օրինաչափ հարցադրումներն ու ցուցաբերի ներգրաւուածութիւն։ Այս կտրուածքով դիտելիս փոխւում է խնդրոյ առարկայի բովանդակային հիւսուածքը. եթէ քաղաքագիտութեան ու պատմագիտութեան համար դրանք ցեղասպանութեան յաւելեալ ապացոյցների վայրեր են, եթէ պատկերացնենք, որ կենսաբանական մարդաբանութիւնը, մասունքներն ուսումնասիրելով, պարզում է նրանց գենետիկ պատկանելութիւնն ու մահուան պատճառները, ապա աստուածաբանութեան ծիրից ներս այդ վայրերն առաջին հերթին զանգուածային նահատակութեան վայրեր են, ընդ որում՝ սրբադասուած նահատակների, որոնց մասունքները սրբերի մասունքներ են եւ պատշաճ, համապատասխան վերաբերմունքի պէտք է արժանանան։ Այս հարցում աստուածաբանութիւնը պէտք է հիմնուի թէ՛ պատմագիտական, թէ՛ մարդաբանական հիմնաւորումների վրայ, որպէսզի յստակ լինի մասունքների պատկանելութեան հարցը։*

*Միաժամանակ նշելի է, որ Հայ Եկեղեցին այդպիսի փորձառութիւն ունի. յայտնի է, որ նահատակների մասունքները հաւաքել են դեռեւս Մեծ եղեռնի տարիներին, նահատակութիւններից, զանգուածային թաղումներից ոչ շատ ժամանակ անց։ Նաեւ Հայոց ցեղասպանութեան նահատակների՝ Տէր-Զօրից բերուած ոսկոր-մասունքները տեղադրուել են Վազգէն կաթողիկոսի կողմից՝ 1965 թ.՝ Մայր Աթոռի տարածքում գտնուող՝ Հայաստանում Հայոց ցեղասպանութեան նահատակներին նուիրուած առաջին կոթողի հիմքում*[40]։

[40] Խմբագրական, «Մեծ եղեռնի նահատակների աճիւններ Տէր-Զօրից», «Էջմիածին» ամսագիր, 1965, ԺԱ.

*Նոյնը նաեւ տեղի ունեցաւ հէնց Տէր-Զօրի Սրբոց Նահատակաց եկեղեցու պարագայում, երբ ոչ միայն եկեղեցին կառուցուեց հայերի նահատակութեան կիզակէտվայրերից ամենայայտնի տեղում, այլեւ Տէր-Զօրի ու շրջակայքի ոսկրաշատ աւազահողերից հանուեցին ոսկորներն ու տեղադրուեցին եկեղեցու խորանի տակ՝ ինչպէս ընդունուած է համաքրիստոնէական եկեղեցական աւանդոյթի մէջ, մի մասն էլ ցուցադրուեց ապակէ ցուցափեղկերի տակ։ Պատահական չէ, որ Սրբոց Նահատակաց եկեղեցին 2014 թ. պայթեցուեց այսպէս կոչուած «Իսլամական պետութեան» ջիհադիստների կողմից[41]։*

*Եթէ անդրադառնանք այն վայրերին, որտեղ, ըստ վկայութիւնների, եղել են կամ կան, եւ կամ մեծ հաւանականութիւն կայ, որ կարելի է գտնել նահատակների զանգուածային ընդհանուր գերեզմաններ, ապա այդ վայրերը, որ փորձել ենք կարճ ժամանակում հաւաքել մեր կողմից ընթերցուած գրականութիւնից, կը դրդեն կազմելու նախնական պատկերացում։ Վստահ ենք, որ այդպիսի վայրերը բազմաթիւ են, յուշեր ու վկայութիւններ ուսումնասիրելիս էլ նպատակադիր ենք դրանք հնարաւորինս մանրամասն խմբաւորել ու դուրս գրել՝ այդպիսով հնագէտների առաջ բացելով յատուկ նոր ուղղութեան՝ եղեռնագիտական հնագիտութեան համար թեմատիկ դաշտ ու գուցէ թէ՝ նոր ուղղութիւն առաջարկելով։ Կարծում ենք, որ խնդրին առանձին ռազմավարական մօտեցում է անհրաժեշտ ցուցաբերել՝ ներգրաւելով համահայկական տարբեր կառոյցների։*

*Նախ անդրադառնանք ամենայայտնի վայրին, որտեղից մինչ օրս էլ աւազուտների միջից ոսկորներ են հաւաքում. Տէր-Զօրին կամ նոյն՝ Տէյր էլ-Զօրին ու շրջակայքին։ Թէոդիկի «Ամէնուն տարեցոյց»-ներից մէկի մէջ Սահակ Մեսրոպը նշում է այդ շրթան. «Քաղաքին [Տէր-Զօրի - Շ. Խ.] դէմ, Քապուռի եզերքն ի վար, Ըէսիւլայնէն մինչեւ Պուսեյրա եւ աւելի հեռուները կ՚երկարին գերեզմանները մեր նահատակներուն։ Մարաթ, Սուար, Շէտտատիէ եւ Հասիճէ գլխաւոր կեդրոններն են՝ ուր կարելի է գտնել այսօր մեր 150 հազար նահատակներուն գանկերն ու անթաղ ոսկերոտին։ Թէեւ ամբողջ Արաբիան-մասնաւորապէս Հալէպէն Մուսուլ-Պաղտատ-Մարտիրոսացած Հայութեան անծայր գերեզմանն է, բայց Տէր-Զօրը կը մնայ՝ որպէս գերագոյն սպանդանոց՝ բոլորին մէջ»[42]։ Արամ Անտոնեանը եւս նշում է տեղանքներ՝ զոհերի թուով. «Բայց նոյն իսկ այդ շարշարանքի կեանքը շատ տեսաւ կառավարութիւնը, եւ այն անապատներուն մէջ կազմակերպեց երեք սոսկալի ջարդեր, առաջինը՝ Ըէս-Իւլ-Այնի մէջ որուն զոհուեցան մօտաւորապէս 70.000 հոգի, երկրորդը՝ Ինթիլլիի մէջ ուր համախմբուած էին 50.000 հոգի եւ մեծ մասամբ կ՚աշխատէին Պաղտատի երկաթուղիի ճամբուն թիւնէլին պեղման։ Իսկ երրորդը, որ ամէնէն զարհուրելին եղաւ Տէր-Զօրի մէջ, ուր Զէքի Պէյ 200.000-ի մօտ հայ սպաննեց»[43]։*

*Յաճախ, հիմնականում բանաւոր զրոյցներում՝ յատկապէս աստուածաբանական քննարկումներում, ուշադրութիւն է դարձւում Մեծ եղեռնի ընթացքում Եփրատ գետի ու անապատի իմաստաբանութեանը (սեմանտիկային)՝ հիմնականում Հայոց ցեղաս-*

(Նոյեմբեր), էջ 80-81։

[41] "SYRIAN PRESIDENT, BASHAR AL ASSAD PROMISES TO REBUILD THE MEMORIAL CHURCH OF THE ARMENIAN GENOCIDE IN DEIR EZ-ZOR," at https://en.s4c.news/2019/01/11/syrian-president-bashar-al-assad-promises-to-rebuild-the-memorial-church-of-the-armenian-genocide-in-deir-ez-zor/ (դիտուել է 17.06.2022 թ.)։

[42] **Թէոդիկ**, Ամէնուն Տարեցոյցը, Ժ.-ԺԴ. Տարի, Կ. Պոլիս, 1916-1920, էջ 130-131։

[43] **Ա. Անտոնեան**, Մեծ ոճիրը։ Հայկական վերջին կոտորածները եւ Թալեաթ փաշայ, Երեւան, 1990, էջ 18։

*պանութեան ժամանակ հայերի կրած տառապանքների ու նահատակութեան եւ նըշուած վայրերի սուրբգրային զուգահեռումների վրայ կենտրոնանալով. Եփրատ գետն իբրեւ մարգարէութիւններում յիշատակուող, ինչպէս եւ՝ դրախտից սկիզբ առնող գետ է աստուածաբանական մտայնութեան մէջ, անապատն էլ՝ հանրայայտ կերպով փորձութիւնների վայր ու չարի բնակավայր, քաւութեան նոխազի բացթողնման՝ զոհի, այլոց մեղքերն իր վրայ վերցնողների գերեզման, մահուան վայր։ Օրինակ՝ Եղեռնը վերապրածներից մեզ հասած «Տէր-Զօր Զէօլիւնդէ» կոչուող երկարաշունչ մի թուրքալեզու երգի մէջ՝ հայերէն թարգմանութեամբ, առկայ է հէնց այդ թեմատիկան։ Մէջբերել ենք մէկ՝ առաւել պերճախօս հատուածներից մէկը.*

***«Զատիկ-կիրակի վրանները քանդեցին,***
***Բոլոր հայերին անապատը լցրեցին,***
***Այծերի պէս հայերին մորթեցին,***
***Հայերն են մեռնում յանուն հաւատքի»[44]։***

*Եփրատ գետի տարբեր վտակներ եւս յուշագիրների յիշատակարաններում մտաբերւում են. մասնաւորապէս, Լեւոն Էվրենկէճեանն ասում է, որ թուրքերը հայերին ջարդում ու խաբուր գետն էին լցնում, որ գետը տանի, իսկ ճամբին կողքը մեծ փոս կար, որտեղ հազարներով ողջ-ողջ մարդկանց գցում էին հորը[45]։*

*Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեանը պատմում է, որ նահատակութիւնների վայրերը հոգեբանօրէն ծանր էին իրենց՝ տարագրեալների քարաւանի համար. «... հալածական ու թափառական հայեր էինք, աճապարոտ քայլերով ժամ առաջ կ'ուզէինք հեռանալ արիւնոտ այն վայրերէն, ուր մեր ետեւ կը թողուին հարիւր հազարաւոր նահատակներու սուրբ նշխարներու ցան ու ցրիւ բեկորներն ու գանկերը»[46]։ Նրա յուշագրութեան միայն առաջին հատորից քաղել ենք նահատակութեան բազմաթիւ վայրերի անուններ։ Թուարկենք այդ վայրերն առանձին-առանձին։*

*Պալաքեանի վկայութիւնների շարքը կը սկսենք նահատակների ոսկորների հանդէպ ակնածանքից ու քրիստոնէական հաւատքից. «Մեր աքսորական ընկերներէն երիտասարդ Պոլսահայ մտաւորականներ յաճախ գետին խոնարհելով՝ այս գանգերը ձեռքերնին կ'առնէին ու արտասուօք կը համբուրէին... Որովհետեւ ասոնք սրբազան նշխարներն էին չարշարալից մահով նահատակուած մեր եղերաբախտ մայրերուն ու քոյրերուն»[47]։ Այս պահուածքը ոճրագործների սրտով չէր, նրանք նեարդայնօրէն էին վերաբերւում նման պահուածքին։*

*Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեանը զանգուածային նահատակութեան վայր է նշում Բողազլեան գիւղաքաղաքի մօտակայ Քէլլերի ձորը[48]։ Ինչպէս վերը նշեցինք, միւսների՝ 300 հոգիանոց խմբի հետ նահատակւում է նաեւ Բողազլեանի Յակոբ Քահանայ Պէրպէրեանը, Ղուրտ Տերեսի կոչուող ձորում։ Բողազլեանի հայերի եւս մէկ զանգուածային նահատակութեան վայր է նշւում այս անգամ Կեաւուր Տերեսին, որտեղ նահա-*

---

[44] **Վ. Սվազլեան,** Հայոց ցեղասպանութիւն։ Ականատես վերապրողների վկայութիւններ, Երկրորդ համալրուած հրատարակութիւն, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ, Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 2011, էջ 591։

[45] Նոյն տեղում, էջ 461։

[46] **Գր. Ծ. Վրդ. Պալաքեան,** Հայ Գողգոթան. դրուագներ հայ մարտիրոսագրութենէն, Ա. հտ., Բ. Տպագրութիւն, Պէյրութ, 1977, էջ 360։

[47] Նոյն տեղում, էջ 267։

[48] Տե՛ս նոյն տեղում, էջ 289, 304, տե՛ս նաեւ ՀՅԹԻ-ի ֆոնդեր, բ-8, թպ-242, ֆհ-81(1), էջ 4։

*տակւում է 250 հայ[49]։ Պախչէ Մարաշի լեռնային ճամբան Ամանոսի երկաթգծի վրայ աշխատող աւելի քան 10.000 հայի նահատակութեան վայր է[50]։ Մարդինի թրքական որբանոցի սան եղած Մարի Մարտիրոսեան-Գրիգորեանն Ամանոսի լեռների կիրճերն առհասարակ նկարագրում է որպէս նահատակների դիակներով լի վայրեր[51]։*

*Էնկիւրիի նահանգի ձորերից 42.000 անթաղ հայ նահատակների մարմինները հաւաքել տալով՝ Թալեաթ փաշան հրամայում է դրանք ամփոփել հաւաքական մեծ գերեզմանների մէջ՝ փորձելով հետքերն անհետացնել[52]։*

*Նոյն յուշագրութեան մէջ Յոզղաթի սարաւանդը նշւում է իբրեւ հազարաւոր հայ կանանց ու աղջիկների կոտորածի վայր[53]։ Պալաքեանը փոխանցում է նաեւ Ալբիստանի լեռներից բխող Ջիհուն եւ Սիհուն գետերում ու դրանց աւազանում նահատակների մարմինների մեծ քանակութեան մասին տեղեկութիւններ, որ եւրոպացիները լուսանկարում էին[54]։ Հազարաւոր հայ մանուկների դիակներ կային Գանլը-Կեչիտի առջեւ. դրանք միմեանց վրայ գցուած երկու մեծ բլուր էին կազմում[55]։ Պաղտատի երկաթգծի վրայ Պոլսից Հալէպ երեք կէտերում՝ Պոզանթիում, Գանլը-Կեչիտում ու Իսլահիյէում՝ իւրաքանչիւրում կային 100.000-աւոր հայ տարագիրների հաւաքավայրեր, որոնք էլ յաճախ գերեզմանատեղիներ էին դառնում[56]։ Եւ մասնաւորապէս նկարագրւում է, որ Իսլահիյէի առջեւ գտնուող դաշտագետինը անհամար մեծ ու փոքր հողակոյտերով ծածկուած մահացած ու սպանուած հայերի մասունքավայր էր/է[57]։*

*Տրապիզոնցի յուշագիր Վարդգէս Մավեանը պատմում է Սեւ ծով նետուած հայ երեխաների մասին։ Տրապիզոնի հայերի համատարած ջարդն սկսւում է 1915 թ. Յունիսի 30-ին. «Նոյն օրը վայրենութեան ու գազանութեան չափանիշը կորցրած Ճէմալ-Ազմիի հրամանով Սեւ ծով թափուեցին մայրերից խլուած տասնեակ հարիւրաւոր երեխաներ ու նորածիններ։ Այդ լկտի գործողութեան կատարումով հրճուող քաղաքի կուսակալ Ճէմալ-Ազմին, շրջապատուած զինուորականներով, իր ծննդեան 50-ամեայ յոբելեանն էր կատարում իր շքեղ պալատում... Յետագայ ամիսներին այդ կեղտոտ ակտի մասնակիցները, առանց կարմրելու եւ խղճի խայթ զգալու, ամբարտաւանօրէն պատմում էին սրճարաններում, թէ ինչպէս պարկերի մէջ՝ իրար վրայ լցուած երեխաները սրտապատառ եղած բղաւում էին՝ մամա, մամա, եւ թէ ինչպէս ծովը նետուած այդ ծանր պարկերը մի քանի ակնթարթում անյայտանում եւ խորասուզւում էին ծովի ալիքների մէջ»[58]։ 1915 թ. ամռանը Խարբերդի Ծովք (Թուրք. Գեոլճուք կամ Գեոլճիք) լճում խեղդամահ են արւում տասնեակհազարաւոր հայեր, այդ թւում նաեւ՝ երեխաներ[59]։ Այս*

---

[49] Երկու վայրերի մասին տե՛ս Եղեռնը Վան-վասպուրականցիների յուշերում, կազմել, խմբագրել եւ ծանօթագրել է Նորա Մելիքեանը, Երեւան, 2003, էջ 104-105։

[50] **Գ.Ր. Ծ. Վրդ. Պալաքեան,** Հայ Գողգոթան, Ա. հտ, էջ 371։

[51] **Մ. Գրիգորեան,** Ատանայէն Մարտինի թրքական որբանոցը 1909-1918, խմբ. Բիւզանդ Եղիայեան, (մեքենագիր յուշ), ՀՅԹԻ-ի ֆոնդեր, Բ-8, թղ 248, էջ 41։

[52] **Գ.Ր. Ծ. Վրդ. Պալաքեան,** Հայ Գողգոթան, Ա. հտ., էջ 179։

[53] Նոյն տեղում, էջ 278, 281։

[54] Նոյն տեղում, էջ 413։

[55] Նոյն տեղում, էջ 425։

[56] Նոյն տեղում, էջ 455։

[57] Նոյն տեղում, էջ 457։

[58] **Վ. Մավեան**, Տրապիզոնի հայերը Մեծ ոճիրի ճանապարհին, Երեւան, «Ճարտարագէտ», 2015, էջ 127։

[59] V. Dadrian, Children as victims of genocide: the Armenian case, Journal of Genocide Research, 5:3 (2003), pp. 426-427.

*ողբալի զանգուածային սպանութիւնները ստորջրային հնագիտութեան նիւթ կարող են դառնալ, եթէ հնարաւոր լինի շրջանցել պետական արգելանքները, որոնք վստահաբար կը լինեն։ Սակայն բաւական է պատկերացնել, որ ստորջրեայ փնտռտուքները ջրի յատակում գտնում են մարդկային կմախքների բազմութիւն. միանգամայն պարզ է դառնում դրա խիստ կարեւորութիւնն ու աննախադէպ ապացուցումը եղածի, ինչպէսեւ՝ դրանց հոգեւոր նշանակութիւնը։*

*Սմբատ Բիւրատի որդին՝ Վաղինակ Բիւրատը, իր մէկ չափածոյ, այլաբանական գրուածքի տողատակում խօսում է էնկիւրիից չորս ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Այաշ գիւղաքաղաքի Գանլը Տէրէ ձորի մասին, որտեղ, իր հաղորդմամբ, նահատակուել են Ապրիլի 24-ին դէպի Այաշ աքսորուած մտաւորականների մի մասը[60]։ Վաղինակ Բիւրատն իր անտիպ «Շէյխի որդին» գրուածքում հաղորդում է, որ 1916 թ. Յուլիսին վաչկատուն էնեզէ եւ Զինչին կոչուող ցեղերը՝ թրքական վայրագութիւններին արձագանքելով, Եփրատ գետի եզերքին գտնուող «Բաբ հաուա» կոչուող վայրում 160.000-ից աւելի հայ տարագիրների են նաւթով այրում՝ նրանց նախապէս խորը փոս փորել տալով։ Այս մասին պատմում են այդ զանգուածային ողջակիզումից փրկուած մի քանի տասնեակ հայեր, ովքեր հրաշքով փրկւում են՝ դիակների տակ մնալով եւ երեսներն ու ձեռքերն այրուած՝ փախչելով ապաստանում են Հալէպի Հայոց առաջնորդարանում[61]։*

*1915 թ. Յունիսի 19-ին Տիգրանակերտի երեւելի հայերից՝ թուով 635 հոգի, թուրք ոստիկանների, չերքէզների, Ամարոյի աշիրեթի տղամարդկանց կողմից գնդակահարւում են Պեզուանի ձորում[62]։*

*«Շատախցի երէցը» վերնագրով յուշագրութեան մէջ Տ. Ղուկաս Քահանայ Ղազարեանը պատմում է, որ իրենց կարաւանն անցնում էր դէպի Իրան տանող ճանապարհով, եւ երբ իրենք հասնում են սահմանին, անցնում են Կոջորի ձորով. ««Կոջորի» անուանի ձորն էր այն, որն քանի՛ քանի՛ հայ հերոսների գլուխ է կերեր, Վարդանանց մեծ պատերազմէն ցայժմ։ Բարբարոս քուրդ աշիրպետ (Սմկօ)-ի զօրքեր նախօրօք այդ լեռնաշղթաներ բռնած կը սպասէին ժողովրդի՝ այդ ձորակէն անցնելուն։ Կռիւ սկսեց կէսօրէն յետոյ՝ ժամը 4-ին. կարկտի տարափի նման բարձր լեռնաշղթաներու գլխէն կրակ կը թափի ժողովրդի գլխին։ Վերջապէս 2 հազարից աւելի կոտորում առնելէ յետոյ Սալմաստ հասանք»[63]։ Սոյն հատուածը կարեւոր է ոչ միայն եղեռնագիտական տեսանկիւնից, այլեւ նշուած միւս նահատակութիւնների՝ առաջին հերթին՝ Ս. Վարդանանց, որոնք ուսումնասիրման կարիք ունեն։*

*Առհասարակ, Հայոց ցեղասպանութեան ընթացքում եղած նահատակութեան վայրերը կարելի է տեղորոշել ոչ միայն ներկայիս Թուրքիայի սահմաններից ներս, այլեւ՝ դուրս, ինչը հայերիս համար աւելի նպաստաւոր հանգամանք կարելի է դիտել՝ գիտական ուսումնասիրութիւններ կատարելու հնարաւորութեան համար աւելի դիւրին։ Այդպիսի վայրեր կարելի է փնտռել թէ՛ Սիրիայում ու Լիբանանում՝ հանրայայտօրէն, այլեւ Իրաքում ու Իրանում, նոյնիսկ Վրաստանում ու Ռուսաստանում՝ վայրերում, որտեղ ապաստանում էին գաղթականների բազմութիւններ։ Ընդ որում, Լիբանանում՝ Անթուրայի Ս. Յովսէփ ֆրանսիական կաթոլիկ քոլէճի տարածքում, նշխարների*

---

[60] **Վ. Բիւրատ**, Մի տեսիլ Մեծ եղեռնից, Ե. Զարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Վաղինակ Բիւրատի ֆոնդ, թ. 9, էջ 1։

[61] **Վ. Բիւրատ**, Շէյխի որդին, ԳԱԹ, Վաղինակ Բիւրատի ֆոնդ, թ. 8, էջ 11։

[62] Համառօտ տեղեկագիր Տիգրանակերտի վերջին կոտորածներում, էջ 16-20։

[63] **Ղ. Տէր Ղազարեան** (Տէր Ղուկաս), Շատախցի երէցը. Յուշեր, Երեւան, «Նաիրի» հրատ., 2011, էջ 18։

*փնտռտուքը կարող է հետաքրքիր գիտական հանգրուանի հասցնել։ Այստեղ տարիներ առաջ կանգնեցուել է խաչքար եւ յուշարձան՝ նուիրուած Անթուրայի հայ որբերին, որոնք թրքացուելու ընթացքում կամ ի սկզբանէ մահացան ու թաղուեցին որբանոցի բակում[64]։ Այդ գիտական հանգրուանը երեխաների ոսկորների գենետիկ ու ախտորոշիչ հետազօտութիւնները կարող են լինել։ Անթուրայի յուշագիր-որբերը պատմում են յայտնի ու անյայտ հիւանդութիւնների մասին, որով տառապում էին երեխաներն ու մահանում[65]։ Ոսկրաբանական քննութիւնը կարող է կա՛մ հերքել, կա՛մ ապացուցել նշուած հանգամանքը։ Ներկայ բժշկական ու փորձագիտական տեխնոլոգիաների պայմաններում կարելի է կատարել հիւանդութիւնների ախտորոշում, իսկ եթէ կան պահպանուած ամբողջական կմախքներ, կարելի է նաեւ մահուան պատճառը պարզել՝ ընդհուպ՝ նրանք ի՞նչ հիւանդութիւններից են մահացել, արդեօ՞ք բռնի մահ է եղել, արդեօ՞ք ենթարկուել են կենսաբանական փորձերի։ Որքան որ հասցրել ենք, խորհրդակցելով մասնագէտների հետ տիրապետել խնդրին, մարդկային ոսկորները նոյնիսկ հազարամեակներ անց կարող են պատմել մարդու առողջական վիճակի ու մահուան պատճառների մասին։ Միաժամանակ, թէեւ մասունքների փորձաքննութիւն ասուածն աստուածաբանական առումով անհեթեթ կարող է թուալ, այդուհանդերձ, նաեւ կարող է բացայայտել երեխաների նահատակութեան հանգամանքները՝ Հայոց ցեղասպանութեան ընթացքում բռնի թրքացմամբ զբաղուող մոդել-որբանոցներից մէկում։ Հայ երեխաների կրած տառապանքները եւս պատշաճօրէն պէտք է ուսումնասիրուեն։*

*Սակայն ոչ միայն Արեւմտեան Հայաստանում, Օսմանեան կայսրութիւնում, այլեւ Արեւելեան Հայաստանում՝ ներկայիս Հայաստանի Հանրապետութիւնում կան Եղեռնի հետեւանքով մահացածների զանգուածային թաղման վայրեր։ Էջմիածին քաղաքում տարբեր կէտեր նահատակների՝ գուցէ ցայսօր անյայտ զանգուածային թաղման վայրեր են, առնուազն՝ Մայր Տաճարի յարակից պուրակները, նախկին Ներսիսեան լճի տարածքը։ Յուշագիր վերապրողների թւում կը գտնուեն այդ վայրերը նշողները. մենք այդպիսի մէկ յուշագրի վկայութիւն ստորեւ կը մէջբերենք. դրանցից երկուսի տեղը կա՛մ անյայտ է, կա՛մ ժամանակի ընթացքում վերածուել է ներկայումս յայտնի քաղաքային նոր գերեզմանոցի. «Անմիջապէս դուրս ենք վազում հասնելու այն մարդկանց, որ վերջին անգամ տեսնենք մեր հարազատին։ Իսկ նրանք արդէն դուրս էին գալիս թաղակապ նկուղից՝ մէկի ձեռքին դատարկ սաւանը... Վաղարշապատում մոլեգնում էին համաճարակ հիւանդութիւններ, որոնց զոհ էին դառնում վանքի լճին կից անտառակում, բաց երկնքի տակ տեղաւորուած գաղթականները։ Ամէն օր սայլերով գիւղաքաղաքից դուրս էին բերում վախճանուածներին ու թաղում ընդհանուր գերեզմանոցում»[66]։*

*Հայոց ցեղասպանութիւնից փրկուած մայրերի ու մանուկների զանգուածային*

---

[64] Տե՛ս **Լ. Մանուկեան,** «Հայ որբուկներու գերեզմանի յուշակոթողի բացում Անթուրա Լիբանան», https://massispost.com/2010/09/հայ-որբուկներու-գերեզմանի-յուշակոթո/ (դիտուել է 26.04.2022 թ.)։

[65] **Վ. Սվազլեան,** Հայոց ցեղասպանութիւն։ Ականատես վերապրողների վկայութիւններ, 438։ Այս առումով կարեւոր է որբերից մէկի՝ Յարութիւն Ալպոյաճեանի հաղորդածն առ այն, որ երեխաները յաճախ հիւանդանում էին, փչերին էր յաջողւում փրկուել, մահացած որբերի դիակներն էլ այնքան մակերեսօրէն էին թաղում, որ բորենիները դրանք հանում ու յօշոտում էին. տե՛ս **Հ. Ալպոյաճեան,** Խաչելութեան ճամբաներով, Երեւան, 2005, էջ 43։ Յարութիւն Ալպոյաճեանը նաեւ ասում է, որ վերջում թուրքերը որբանոցի դեղագործին պատուիրել էին թունաւորել որբերին ու նոր հեռանալ. ահա այս դէպքերը հասկանալը խիստ կարեւոր են, ընդ որում, ոչ միայն դէպքերի ու երեւոյթների պատմագիտական բացայայտման առումով, այլեւ մշակութային ու կրօնական. տե՛ս նոյն տեղում, էջ 50։

[66] Վարազդատ Յարութիւնեանի յուշերից հատուած. տե՛ս Եղեռնը Վան-վասպուրականցիների յուշերում, էջ 121։

*ջարդի մասին՝ Արեւելեան Հայաստանում, խօսում է Գարեգին Նժդեհն իր «Խուստուփեան կանչեր» գրքում. նա ասում է, որ Աջիբաջում Խալիլ Պէյի զօրքը կոտորեց Մեծ եղեռնը վերապրած մօտ 2000 հայ կին ու երեխայ, եւ այդ վայրը նա նկարագրում է որպէս կմախքներով լի[67]։ Գուցէ թէ նրանք թիրախաւորուեցին, քանի որ Հայոց ցեղասպանութիւնից փրկուած էին. սա եւս պէտք է պարզել, եւ եթէ դա հաստատուի, ապա հակահայկականութեան ուսումնասիրութեան եւս մէկ էջ կը բացայայտուի։*

*Չենք կարող չանդրադառնալ անհատների նահատակութեան վայրերին. այս իմաստով ընտրեցինք երկու մտաւորականի ու մէկ հոգեւորականի նահատակութեան վայրերը։ Առաջինը գրողներ Ռուբէն Սեւակի (կրօնափոխութիւնից հրաժարուած) եւ Դանիէլ Վարուժանի, միւսը՝ Ներսէս Եպիսկոպոս Դանիէլեանցի նշխարների գտնուելու հնարաւոր վայրերն են։ Ռուբէն Սեւակի, ինչպէս եւ նրա հետ՝ Դանիէլ Վարուժանի ու միւս երեք ընկերների սպանութեան վայրի առնչութեամբ Գր. Ծ. Վրդ. Պալաքեանը նշում է, որ «.... կը հասնին Թիւնայի զառիվերը, ուր կը սկսի Գալայճըքի սարաւանդը, դեռ չբարձրացած զառիվերը»[68], աքսորականների կառքը կանգնեցւում է ոճրագործների կողմից, Ռուբէն Սեւակին ու ընկերներին «կ՚իջեցնեն մերձակայ ձորը՝ առուակի եզերքին, եւ զոհերուն զգեստները անվնաս պահելու համար նախ կը մերկացնեն։ Ապա դաշոյնները քաշած կը յարձակին իրենց անզէն եւ անպաշտպան զոհերուն վրայ, եւ անխնայ կը սկսին ծակծկել եւ բզկտել դաշոյններով տարբախտ մեր ընկերներուն մարմինները, եւ դանակով անդամահատել ասոնց ոտքերն ու բազուկներն եւ այլ զգայարանքները...»[69]։ Այս մասին Գրիգոր Ծ. Վրդ. Պալաքեանին պատմում է ականատես թուրք կառապաններից մէկը։*

*Ներսէս Եպիսկոպոս Դանիէլեանցի նահատակութեան վայր է նշւում Գարտաշլար ձորը՝ Թաշլդերէ կոչուած վայրում, մի ծառի տակ[70]։ Ի հարկէ, այդ վայրում գտնուող ծառերը ներկայում կարող են է՛ւ բազմաթիւ լինել, է՛ւ կարող են այլեւս ծառեր չլինել, տեղանքը կարող է այնքան խրթին լինել՝ նշխարները գտնելն անհնարին դարձնող, որ հնարաւոր չլինի ոչինչ նոյնականացնել, բայց առնուազն փորձել անհրաժեշտ է, քանի որ գուցէ թէ՝ փնտռելու ընթացքում որոշ յուշող նշաններ ի յայտ գան կամ տեղաբնակների յիշողութիւններն ու աւանդոյթները, բանաւոր փոխանցուած զրոյցներն օգնեն այդ հարցում։*

*Շատ հնարաւոր է, որ սոյն ուսումնասիրութեան մէջ յիշատակուած վայրերն աւելի քան հարիւր տարի անց փոխել են իրենց անունը, կամ, օրինակ, արդիւնաբերական, տնտեսական նպատակների շինութիւններ են կառուցուել այդ վայրերում, ուստի գուցէ անհնար լինի դրանց մի մասի նոյնականացումը։ Ամէն դէպքում, վերջիններիս կողքին նաեւ կան ու կը լինեն այնպիսի վայրեր, որտեղ կարելի է գտնել հայ նահատակների մասունքները։ Միաժամանակ, եղեռնագիտական հնագիտութիւնը նահատակների մասունքների փնտռտուքի հարցում պէտք է բաւականին զուսպ գործի, քանի որ այդ վայրերի բացէ ի բաց ուսումնասիրութիւնները, հնարաւոր է՝ օգուտի փոխարէն վնաս հասցնեն։*

*Կարեւոր ենք համարում առանձնացնել նաեւ մի ֆենոմեն, որը յաճախ է հանդիպում Հայոց ցեղասպանութեան յուշագրութիւններում ու վկայութիւններում։ Խօսքը*

---

[67] **Գ. Նժդեհ,** Խուստուփեան կանչեր, Գորիս, տպարան «Սասուն», 1921, էջ 8։

[68] **Գր. Ծ. Վրդ. Պալաքեան,** Հայ Գողգոթան, Ա. հտ., էջ 199։

[69] Նոյն տեղում։

[70] Տե՛ս **Ն. Վրդ. Դանիէլեանց**, Կեանքն առանց հաւատքի, Ս. Էջմիածին, 2018, էջ 11։

*սպանուածների մարմինների՝ մասունքների հանդէպ եղած վերաբերմունքի մասին է՝ նոյն թուրքերի կամ քրդերի կողմից։ Հետաքրքիր է, որ յայտնի են դէպքեր, երբ հայերի մարմիններից առանձնացուած մասերը, անգամ հագուստն ու այլ պարագաներ, թուրքերը կամ քրդերը, նոյնիսկ իրենց հակաքրիստոնէական հոգեբանութեամբ, համարում էին գերբանական ուժով օժտուած, գուցէ թէ՝ մոգական ազդեցութիւն ունեցող, բայց նաեւ չի բացառւում, որ կար ընկալում, որ դրանք նահատակների մասունքներ են, թէկուզ եւ՝ այլ՝ ոչ իսլամադաւան նահատակի, բայց, այդու հանդերձ, հաւատքի նահատակի։ Այդպիսի մի դէպք է Մեսրոպ Մեսրոպեանի հետեւեալ հաղորդումը. կանանց կրծքերի պտուկներից մի իմամ իր համար համրիչ էր պատրաստել՝ իբրեւ հուռութք եւ խաղի գործիք. «Բաթթալցի իմամի ձեռքի հարիւր հատանի համրիչը կը բաղկանար իր սպանած հայ կանանց եւ աղջիկներու ստինքներու պտուկներէն, զոր որպէս հուռութք ձեռքէ ձեռք կը խլէին իսլամութեան հիմնադրի միջնորդութեամբ առողջութիւն մուրացող հիւանդ թուրքերը....»[71]։ Կարծում ենք չափազանց դժուար կարող է լինել մեզ՝ հայերիս համար այսպիսի առարկայացուած մասունքների մասին անգամ մտածելը, սակայն նաեւ այս կարգի մասունքները պէտք է ուշադրութեան ներքոյ պահել ու ի մտի ունենալ։*

### *Գ. Լենին-Ստալինեան Բռնաճնշումների Շրջանի Նահատակութեան Վայրերի Եւ Այնտեղ Կատարուող Ուխտագնացութիւնների Խնդիրը*

*2015 թուականի Ապրիլի 23-ին սրբադասուեցին Մեծ եղեռնի նահատակները, ինչն իր հերթին, թերեւս, բարձացնում է յաջորդ կարեւոր հարցը. իսկ ե՞րբ կը սրբադասուեն լենինեան եւ ստալինեան տեռորների ընթացքում՝ յանուն Քրիստոսի նահատակուածները, ե՞րբ աստուածաբանօրէն կ՚ուսումնասիրուի, պաշտօնապէս կը ճանաչուի, բարձաձայն կը յայտարարուի նրանց նահատակութեան փաստը։ Այս խնդիրների լուծումը պահանջում է համապատասխան քայլերի իրագործում, ինչպէս եղաւ Հայոց ցեղասպանութեան նահատակների սրբադասման պարագայում։ Միաժամանակ խնդիրն ունի նաեւ քաղաքական լայն ենթատեքստ. շատ յաճախ լենին-ստալինեան տեռորի քննադատութիւնն ընկալւում է որպէս հակառուսականութիւն, որի հետ համաձայն չենք։ Անհրաժեշտութիւն կայ շեշտելու, որ այդ տարիներին առաւել հալածուել է ռուս ազգն ու, համապատասխանաբար, Ռուս ուղղափառ եկեղեցին։ Այս առումով նշելի է, որ հէնց Ռուս ուղղափառ եկեղեցին 2021 թուականի Սեպտեմբերի 23-24-ին ստալինեան տեռորի նահատակների համար սահմանել է համընդհանուր յիշատակութեան օր՝ դրա համար ընտրելով Հոկտեմբերի 30-ը եւ այն անուանելով «աստուածամարտների կողմից սպանուած կամ անմեղ բանտարկուածների յիշատակութեան օր»[72]։*

*Այստեղ տեղին է մատնանշել, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին դեռեւս 100 տարի առաջ պոլշեւիկների կողմից սպանուածներին համարում էր նահատակ։ Այսպէս. 1921 թուականի փետրուարեան ապստամբութիւնը կարմիր բանակի կողմից ճնշուելուց յետոյ Խորէն Ա. կաթողիկոսը «... չվախենալով հատուցումից, բացէ ի բաց հոգեհանգստի արարողութիւններ էր կատարում պոլշեւիկների ձեռքից ընկած հերոսների եւ նահատակների պատուին»[73]։ Կարեւոր է այն հանգամանքը, որ ժամանակի*

---

[71] Մեսրոպ Մեսրոպեանի վկայութիւնը (թ. 172)՝ **Վ. Սվազլեան**, Հայոց ցեղասպանութիւն։ Ականատես վերապրողների վկայութիւններ, էջ 359։

[72] Православие, https://pravoslavie.ru/141992.html (դիտուել է 25.09.2021 թ.)։

[73] **Ս. Ստեփանեանց**, Հայ Առաքելական եկեղեցին ստալինեան բռնապետութեան օրոք, Երեւան, 1994, էջ 11։

*եկեղեցականների ու եկեղեցամերձ մարդկանց մօտ նրանց մահն ընկալւում էր որպէս նահատակութիւն, ու, թերեւս, այդ ընկալումը փոփոխութեան չի ենթարկուել նաեւ յետագայում։ Սա կարելի է բացատրել նրանով, որ նահատակութեանը միշտ նախորդում է հալածանքը։ Եկեղեցականները յայտնւում էին ծանր դրութեան մէջ, նրանց կեանքն օրէցօր դժուարանում էր, յաճախ յայտնւում էին երկընտրանքի առջեւ՝ կա՛մ թողնել եկեղեցին եւ մերժել սեփական սկզբունքները, կա՛մ, լաւագոյն դէպքում, բանտ գնալ[74]։ Իսկ յանուն հաւատքի հալածուած եւ մինչեւ սեփական մահը հաւատքը չուրացած, պայքարած մարդիկ միշտ ընկալուել են որպէս նահատակ-սրբեր։*

*Պոլշեւիկեան տեռորի զոհերի նկատմամբ «նահատակ» եզրն օգտագործել են նաեւ թեման ուսումնասիրող հայազգի հետազօտողները։ Այսպէս, իր ուսումնասիրութիւններում Սիւնիքում բռնադատուած հոգեւորականների մասին գրելիս նաեւ Կապան քաղաքի Երկրագիտական թանգարանի նախկին տնօրէն Գրիշա Սմբատեանը նշում է. «Նահատա՞կ չէր Տէր Մկրտիչ Դարբասեցին։ Նահատա՞կ չէր Կոնասի ծմակուտներում յօշոտուած Տէր Անդրանիկ Ճակատենցին։ Նահատա՞կ չէր իր հերոսական կեանքով քաջ յայտնի Տէր Գրիգոր Կոռնիձորցին։ Նահատակ չէի՞ն բոլոր այն հոգեւորականները, ովքեր յետագայում կուլ գնացին պոլշեւիկեան կարմիր տեռորին»[75]։ Իսկ որոշ հետազօտողներ լենին-ստալինեան տեռորի շրջանի մասին իրենց աշխատութիւնները համարել են մարտիրոսագրութիւններ, ինչը հերթական անգամ ցոյց է տալիս, որ ստալինեան շրջանի սպանութիւնները եւ սպանուածները ներկայումս նոյնպէս ընկալւում են որպէս մարտիրոսներ, նահատակներ[76]։*

*Շարունակելով հարցի քննութիւնը՝ հարկ է նշել, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ունի սրբութեան ճանաչման իր ուրոյն կենսափորձը, որը բաղկացած է 2 կարեւորագոյն, իրար չհակասող, համալրող շրջափուլից.*

*Ա. ժողովրդական մակարդակում սրբութեան ճանաչում - «սրբադասում»,*

*Բ. պաշտօնական սրբադասում։*

*Վստահօրէն կարելի է պնդել, որ նմանատիպ շրջափուլերով է անցել նաեւ Մեծ եղեռնի նահատակների սրբադասումը։ Ինչպէս գիտենք, ժողովրդական սրբադասման կարեւորագոյն ցուցիչներից է նահատակների գերեզմաններ այցելութիւնն ու այդ գերեզմանների հրաշագործ բնոյթին հաւատալը եւ ապաւինելը։ Ուսումնասիրուող թեմայի շուրջ մեր դաշտային հետազօտական աշխատանքների ընթացքում նկատեցինք մի հետաքրքիր երեւոյթ, ինչն ուղղակիօրէն կապուած ենք համարում նահատակների, այդ թւում՝ լենին-ստալինեան տեռորի զոհերի գերեզմանների սակրալացման հետ։ Այսպէս, հաւաքելով մի շարք պատմութիւններ Շիրակի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Աբմաւիրի, Արագածոտնի եւ Սիւնիքի մարզերից[77], խորհրդակցելով ազգա-*

[74] Նոյն տեղում, էջ 31։

[75] **Գ. Սմբատեան**, Սիւնիքը փոռնութեան մէջ. հայ-թաթարական բախումները, Երեւան, 2017, էջ 252; **Գ. Սմբատեան**, Սիւնիք. Պատմութիւն եւ յիշողութիւն, Երեւան, 2019, էջ 63։ Նահատակի ընկալում է եղել նաեւ 1905-1906 թթ. հայ-թաթարական բախումների ժամանակ քրիստոնեայ լինելու պատճառով սպանուած հոգեւորականների ու աշխարհականների պարագայում։ Սիւնիքում իրականացուած ստալինեան տեռորի, յանուն քրիստոնէութեան, նահատակուածների մասին առաւել մանրամասն տե՛ս **Գ. Սմբատեան**, Երկաթէ վարագոյրից այս կողմ, Երեւան, 2009, էջ 197-223։

[76] **Ս. Միրզոյեան**, Բռնադատուածներ. քաղաքական բռնաճնշումները Նոյեմբերեանում 1920-1950 թթ., Երեւան, 2005, էջ 6։

[77] Նման հրաշագործ, վախ բռնող գերեզմանների ուսումնասիրութիւններ կատարուել են Արտաշատ, Վարդենիս, Մարտունի քաղաքների գերեզմանոցներում, Ապարանի Սուրբ Աստուածածին եկեղեցու շրջակայքի գերեզմանոցում, Օշական, Անգեղակոթ, Բռնակոթ Լուսաշող գիւղերում, Շիկահող գիւղի Սուրբ Ստեփանոս Նա-

*գրագէտ գործընկերների[78] հետ՝ առանձնացնենք նորօրեայ նահատակների գերեզմանների սրբացմանը բնորոշ հիմնական գծերը.*

*Ա. Այդ նահատակների գերեզմանները միշտ չէ, որ պատկանում է հոգեւորականի կամ ստալինեան աստուածմերժութեան տարիների զոհի, սակայն պարտադիր պայման է գերեզմանում ամփոփուած մարդու՝ բռնութեամբ սպանուած լինելը։*

*Բ. Գերեզմաններին այցելութեան էին/են գալիս հիմնականում վախի, ընկնաւորութեան, հոգեկան ու հոգեբանական խնդիրների դէպքում։*

*Գ. Գերեզմանների վրայ պարտադիր կերպով կոտրում են շիշ, ապակի, որեւէ խեցեղէն, տուեալ դէպքում «հիւանդին» անակնկալի բերելու ճանապարհով «բուժելու» համար։*

*Այս երեւոյթի վերոգրեալ կէտերը, բնորոշ նաեւ միւս վայրերում հաւաքուած պատմութիւններին, համալիր կերպով ներկայացնում է երեխայ ժամանակ նման կերպ վախերից «բուժուած» Անահիտ Ոսկանեանը. «Մեր գիւղում՝ Բռնակոթում, մի գերեզման կայ, «Շագեալդու հանգիստ» են ասում։ Այնտեղ տանում՝ նոյն եղանակով վախ են չափում։ Լսել եմ, որ նրան դաժանաբար սպանել են, բայց երեւի հոգեւորական չի եղել։ Իմ վախը մորաքոյրս է չափել այնտեղ։ Ջրով լցուած շիշ վերցրեց հետը, գնացինք գերեզման։ Հայր մերն ասաց, ջրից մի քանի կում խմեցի, երեք անգամ խաչակնքեցինք, գերեզմանի շուրջը սկսեցինք պըտըտուել, ինքն իմ հետեւից էր գալիս ու անսպասելի շիշը խփեց քարին՝ ջարդեց։ Ես մտքերի մէջ ընկած էի քայլում, անակնկալից վեր թռայ։ Մորաքոյրս ասաց. «Վե՛րջ, սրթսրթացիր՝ վախդ անցաւ»։ Գերեզմանի կողքերը բազմաթիւ ջարդուած շշերի կտորներ կային։ Մորաքոյրս ասաց, որ գերեզմանում թաղուածը մահից առաջ տանջուել է, ինքն էլ է վախեր զգացել, քեզ կ՚օգնի, որ քո վախին յաղթես։ Մորաքոյրս հիմա մահացել է, անունը՝ Վիկտորեա Դիլանեան, կարծեմ 1940 թիւ էր»[79]։ Շիշ կոտրելու միջոցով բժշկուելու համար մարդիկ այցելութեան են գալիս նաեւ Ապարանի Ս. Աստուածածին եկեղեցու մօտ՝ 1946 թ. նահատակուած Տէր Ռաֆայէլ Աւագ Քահանայ Տէր Յարութիւնեանի գերեզմանին[80]։*

*Քննուող խնդրի համատեքստում հետաքրքրական է Գ. Սմբատեանի հաղորդածը։ Ըստ Գ. Սմբատեանի՝ մինչեւ 1970-ականները յատուկ ուշադրութեան, խնամքի ու պաշտամունքի է արժանացել ճեմարանաւարտ Սուլթան Տէր Գէորգեանի կամ Արքայիկի գերեզմանը, ով եւ ում թողած ժառանգութիւնը հանդիսանում է ստալինեան վարչակարգի զոհերից մէկը։ Իսկ ստալինեան բռնաճնշումների զոհ Տէր Մովսէս Քահանայ Մելիք-Նուպարեանի գերեզմանի վրայ մինչ օրս կատարւում են նաեւ մոմավառութիւններ։ Հոգեւորականի գերեզմանի պաշտամունք Գ. Սմբատեանի կողմից յիշւում է նաեւ Գորիս քաղաքում, ինչը յետագայ ճշգրտումների կարօտ հանգամանք է[81]։*

*Անդրադառնանք վերոնշեալ՝ գերեզմանների կամ գերեզմանաթմբերի վրայ շիշ, ապակի կամ խեցեղէն կոտրելու երեւոյթին, որն առկայ է Հայկական լեռնաշխարհում*

---

խավկայ եկեղեցու շուրջ գտնուող գերեզմանոցում եւ այլուր։

[78] Արժէքաւոր դիտարկումների համար երախտագիտութիւն ենք յայտնում ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աւագ գիտաշխատողներ, պ.գ.թ. Լ. Սիմոնեանին եւ պ.գ.թ. Կ. Յովհաննիսեանին։

[79] Ասացող՝ Անահիտ Ոսկանեան, 1970 թ., Հ. Յակոբեան, Դաշտային ազգագրական նիւթեր, 2021, Օգոստոսի 5, 15 տոպէ։

[80] Ասացողն անանուն, Հ. Յակոբեան, Լ. Սիմոնեան, Կ. Յովհաննիսեան, Դաշտային ազգագրական նիւթեր, 2021 թ., Յունիսի 10, 30 տոպէ։

[81] Ասացող՝ Գրիշա Սմբատեան, 1957; Հ. Յակոբեան, Դաշտային ազգագրական նիւթեր, 2022, Յուլիսի 17, 5 տոպէ։

դեռեւս ուշբրոնզէդարեան շրջանից[82]։ Նշեալ շրջանում, ինչպէս նաեւ երկաթէ դարաշրջանում կան գերեզմանաթմբերի վրայ դիտաւորեալ խեցեղէն կոտրելու բազմաթիւ օրինակներ։ Իրերի ծիսական ջարդումը, հաւանաբար, նպատակաուղղուած էր ննջեցեալի վերածննդին[83]՝ խորհրդանշելով անդր-սահմանային վիճակ կամ անցումը մի վիճակից մէկ այլ վիճակի[84]։ Իրը, գոյքը կոտրելու դրդապատճառը, թերեւս, այն մտածումն է, որ այնկողմնային աշխարհում իրերը կարող են ծառայել իրենց նպատակին կամ այն աշխարհում իրերի, գոյքի դիտաւորեալ կոտրումը լսելի, ընդունելի կարող է համարուել միայն դրանց ամբողջականութիւնը կորցնելուց յետոյ։ Այս համատեքստում նորագոյն վկաների կամ նահատակների գերեզմանների շուրջ 22երի ջարդումը տրամաբանական է թւում։

Հետաքրքրական է մի փաստ եւս. նահատակի կամ ապագայ նահատակի գերեզմանի մօտ անօթ կոտրելու մասին մի բնութագրական պատկեր նկատեցինք՝ նկարագրուած Նոր Կտակարանում՝ Յիսուս Քրիստոսի եռօրեայ մահուանը նախորդող մի դրուագ. «Եւ մինչ նա Բեթանիայում էր, բորոտ Սիմոնի տանը սեղան նստած, եկաւ մի կին, որ հետն ունէր նարդոսի ազնիւ, մեծարժէք իւղի մի շիշ. եւ շիշը կոտրելով՝ իւղը թափեց Յիսուսի գլխին։ Աշակերտները զայրացան եւ ասացին. «Այդ իւղը ինչո՞ւ այսպէս պիտի կորչէր. կարելի էր այդ անուշահոտ իւղը վաճառել աւելի քան երեք հարիւր դահեկանի եւ տալ աղքատներին»։ Եւ խիստ զայրանում էին կնոջ վրայ։ Եւ Յիսուս նրանց ասաց. «Թո՛յլ տուէք դրան. ինչո՞ւ էք նեղութիւն տալիս, որովհետեւ նա ինձ համար մի բարի գործ արեց։ Ամէն ժամ աղքատներին ձեզ հետ ունէք եւ երբ ուզենաք, կարող էք նրանց բարիք անել։ Բայց ինձ ամէն ժամ ձեզ հետ չունէք։ Դա, ինչ որ կարող էր, արեց. առաջուց խնկաւետեց իմ մարմինը ի նշան պատանքուելու (Մարկ. ԺԴ.3-9)»։ Ինչպէս տեսնում ենք, Աւետարանի այս հատուածում նկարագրւում է, թէ ինչպէս կինը մեղքերից ազատուելու ու Քրիստոսին երկրպագելու համար կոտրեց շիշը եւ նարդոսի իւղը թափեց Նրա գլխին։ Քրիստոսի մեկնաբանութեան համաձայն, ինչպէս երեւում է աւետարական տեղիում, դա խորհրդանշեց Իր մօտալուտ մահը, եւ գուցէ թէ՝ այս կարեւոր տեղիում մենք գործ ունենք մերձաւորարեւելեան մի ծիսական աւանդոյթի հետ, որ բնորոշ է եղել տարբեր ժողովուրդների, այդ թւում՝ հայերիս, ու մինչ օրս դարերի բովով անցնելով, վստահաբար՝ նաեւ ձեւափոխումների ենթարկուելով, բայց հիմնական նշանակութիւնը, այդուհանդերձ, պահպանած՝ հասել է մեզ՝ իր ժողովրդական վերոբերեալ դրսեւորումներով։ Կարծում ենք՝ այս աւանդոյթը կարօտ է յետագայ մանրամասն քննութեան, եւ այստեղ միայն կանգկացնենք հետեւեալ զուգահեռները.

1. Ե՛ւ Քրիստոսի, ե՛ւ նահատակների պարագայում մենք գործ ունենք բռնի մահուան փաստի հետ։

2. Երկու դէպքերում էլ անօթի մէջ կայ հեղուկ. մէկի պարագայում նարդոսի իւղ, միւսի պարագայում՝ ջուր։

3. Ե՛ւ Քրիստոսի, ե՛ւ նահատակների պարագայում անօթը բերող անձինք եկել ու գալիս են մեղքերը քաւելու, ապաշխարելու ու որպէս դրա հետեւանք՝ դիտարկուող հիւանդութիւնների բուժման համար։

4. Խեցեղէնի, շշի ու այլ իրերը կոտրելն ընկալուել է որպէս չարխափան,

[82] **Գ. Թումանեան**, Աշտարակի խոշարաղերի ուշ բրոնզէդարեան գերեզմանները, ՊԲՀ, թ. 1, 1999, էջ 249-262:

[83] **Э. Церен,** Библейские холмы, Москва, 1966, с. 364, 385.

[84] **В. Я. Пропп,** Исторические корни волшебной сказки, Ленинград, 1986, с. 349.

դիւահալած երեւոյթ, ու, թերեւս, պատահական չէ, որ ե՛ւ Քրիստոսի դէպքում, ե՛ւ նահատակների գերեզմանների վրայ, ովքեր համարւում եւ համարուել են դիւահալած, չարխափան, մարդիկ ջարդել են շիշ, խեցեղէն եւ այլ կոտրուող իրեր։

5. Քրիստոսի նկատմամբ կատարուած այդ գործողութիւնը եւ սրուակը կոտրելը կարող է հանդիսանալ օրինակ ու լեգիտիմացնում է քրիստոնեաների պարագայում այն գործողութիւնները, որ այժմ էլ իրագործում են հայ քրիստոնեաները նահատակների գերեզմանների վրայ։

Լենին-ստալինեան տեռորի նահատակների սրբութեան ճանաչման կամ սրբադասման հարցում կան նաեւ բարոյական, էթիկական խնդիրներ։ Այսպէս պէտք է.

Ա. Ուսումնասիրուեն արխիւները, որպէսզի ստուգուեն, թէ ով է, թէկուզ հարկադրաբար, բայց ստորագրել մատնագրերի տակ, իսկ ով է դիմացել տանջանքներին ու նահատակուել։ Որպէսզի յետագայում կոնկրէտ անձանց պարագայում եկեղեցու առջեւ չծառանայ կրօնա-բարոյական մեծ կորուստների վտանգ պարունակող ապասրբացման երեւոյթը։

Բ. Պէտք է զատուեն յանուն Քրիստոսի նահատակների եւ ուղղակի այլեւայլ դրդապատճառների հետեւանքով անմեղ դատապարտուածները, որովհետեւ եկեղեցին չի կարող ճանաչել սուրբ նրանց, ովքեր չեն նահատակուել յանուն քրիստոնէութեան։

Ուստի ամփոփելով կարող ենք նշենք, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն, ըստ ամենայնի, սպասւում է երկարատեւ ու մանրազնին աշխատանք՝ նշեալ անձանց սրբութեան ճանաչման հարցում։ Լենին-ստալինեան տեռորի ընթացքում նահատակուածների սրբադասումը դառնում է օրաւուր աճող պահանջ։ Կարծում ենք՝ պատահական չէ, որ Խորեն Ա. Մուրատբեկեան նահատակ կաթողիկոսի գերեզմանի վրայ մշտապէս նկատելի են թարմ ծաղիկներ ու հաւատացեալների հոսք։ Վերոնշեալ նահատակների գերեզմանների վրայ կատարուող ժողովրդական ծէսերը կարելի է դիտարկել որպէս դարեր ի վեր իրականացուող, սրբադասման առաջին փուլի՝ ժողովրդական սրբադասման միջնադարեան, ժողովրդական ծէսի վերյուշ, որը կարող է հիմք հանդիսանալ վերականգնելու դրա կատարման մեխանիզմները կամ առնուազն պատկերացում կազմելու միջնադարեան հայի հաւատալիքների ու ժողովրդական, բարեպաշտական գործողութիւնների մասին։

---

Այսպիսով, անդրադառնալով սրբութեան ճանաչման ու սրբադասման համատեքստում նահատակութեան վայրերի ու նահատակների մասունքների ընդհանրական քրիստոնէական ընկալմանը, սոյն յօդուածով կենտրոնացում կատարուեց Հայոց ցեղասպանութեան ընթացքում արձանագրուած նահատակութեան վայրերին, որոնք յիշատակուած են եղեռնագիտական գրականութեան, յուշերի ու վկայութիւնների մէջ, ինչպէս եւ՝ նախնական, ազգագրական անդրադարձ եղաւ լենին-ստալինեան բռնաճնշումների ընթացքում սպանուածներին ու նրանց գերեզմանների վրայ կատարուող ժողովրդական հաւատալիքի՝ անօթների կոտրմանն ու հիւանդի եւ հիւանդութիւնների բուժման հանգամանքին։ Այսու՝ յօդուածի նպատակը այդ վայրերը նախնական իմաստով մատնանշելը եւ դրանց վրայ ուշադրութիւն հրաւիրելն է՝ յետագայ ուսումնասիրութիւններ կատարելու տեսլականը հետապնդելով։ Միաժամանակ, պէտք է ընդգծել, որ հնարաւոր ենք համարում առանձին ուսումնասիրութիւններով տեղորոշել, քար-

*տէզագրել նահատակների հնարաւոր թաղման վայրերը, ընդ որում՝ ոչ միայն զանգուածային թաղման վայրերը, այլեւ անհատների գերեզմանները, որոնք, ինչպէս ցոյց են տալիս բանահաւաքչական նիւթերն ու այլ տեղեկութիւնները, ժողովրդական պաշտամունքի, յիշողութեան ու ծիսականացուած արարողութիւնների վայրեր են յաճախ դարձել։ Այդպիսի ուսումնասիրութիւնների կարիք ունեն նաեւ 1920 թ. հայ-թուրքական պատերազմի ընթացքում թուրքական բանակի կողմից կոտանքների ենթարկուած ու սպանուած հայերի թաղման վայրերը ՀՀ Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի ու Արագածոտնի մարզերում*[85]*։ Սոյն նախնական դիտարկումներից յետոյ նպատակադրուած ենք իրականացնելու յետագայ՝ առաւել մանրամասն ու թիրախային ուսումնասիրութիւններ, որոնք նաեւ կը կրեն համալիր՝ միջ-գիտակարգային բնոյթ։*

**ՇՈՒՇԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ**

*պ. գ. թ., «Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայոց ցեղասպանութեան զոհերի ու վերապրողների փաստագրման եւ ուսումնասիրութեան բաժնի վարիչ, աւագ գիտաշխատող*

**ՀԱՅԿ ՅԱԿՈԲԵԱՆ**

*պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի եւ Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի աւագ գիտաշխատող, Հայ-սլաւոնական համալսարան, Արեւելագիտութեան ինստիտուտ, դասախօս*

**ԳԱՌՆԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

*պ. գ. թ., Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի աւագ գիտաշխատող, Գէորգեան հոգեւոր ճեմարանի դասախօս*

[85] Տե՛ս օրինակ՝ **Վ. Հախոյեան**, «Քէմալականների իրականացրած զանգուածային կոտորածները փամբակի տարածքում (Շիրակի նահանգ) ըստ ականատես-վերապրածների ընտանեկան յիշողութիւնների (1920-1921 թթ.)», Ցեղասպանագիտական հանդէս 9 (1), 2021, էջ 83-122: https://agmipublications.asnet.am/wp-content/uploads/2021/11/2021.1_83-122.pdf (դիտուել է 22.04.2022 թ.), **Վ. Հախոյեան,** «Քէմալականների իրականացրած զանգուածային կոտորածներն Ալեքսանդրապոլի գաւառում (1920-1921 թթ.)», Հայագիտութեան հարցեր 3 (24), 2021, էջ 72-84: http://www.armin.am/images/menus/3275/Vazgen%20Hakhoyan.pdf (դիտուել է 22.04.2022 թ.):